ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

<ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/5> ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և պայմանագիր կնքելու որոշման մասին

ք.Էջմիածին 12.09.2019թ.

1. ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և հրավերով սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերի մասին

---

Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել հաղթող մասնակցի՝ հայտերը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը:

## 2. Ընթացակարգի հայտերը գնահատելու և պայմանագիր կնքելու որոշման մասին

---

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերը հանձնաժողովը որոշեց հաստատել հաղթող ճանաչված մասնակցի գնահատման արդյունքները, ինչպես նաև <<ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/5> ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել < Էլնիկլիպեկ>ՍՊԸ-ին և առաջարկել կնքել պայմանագիր։

Ընդունվել է որոշում՝ կողմ՝6 դեմ 0 :

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
<<Բարեկարգում>> տնօրինության պետ՝ — Մ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

Էջմ. համայնքապետարանի Քաղաքաշինության և հող օգտագործման բաժնի պետ՝ — Դ. Բադալյան

<<Բարեկարգում>> տնօրինության պետի տեղակալ՝ — Հ. Հովհաննիսյան

<Բարեկարգում> տնօրինության <Բարեկարգում և կանաչապատում> տեղամասի պետ՝ — Գ. Փահլաբաշյան

Էջմ. համայնքապետարանի <Բարեկարգում > տնօրինության <Բարեկարգում> տեղամասի տեսուչ — Լ.Քոչարյան

Էջմ. համայնքապետարանի Ֆինանսական բաժնի 1-ին կարգի մասնագետ՝ — Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Էջմ. համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ՝ — Կ.Խաչբերդյան